

Ճամկահայաստանից լուրեր են գալիս, որ այնտեղ հայերը մի կտոր հացի համար թողնում են իրենց եկեղեցին եւ կաթովի-կութին ընդունում: Ինչ կարելի է ասել, ըստ երեւութին. անհրաժեշտ կարիքը ստի-պում է նոցա: Սակայն նոցա պապերն եւս շատ անգամ՝ այդպիսի եւ ասելի մեծ կարիք ունեցել են: Բայց հաւատարիմ են մնացել իրենց եկեղեցուն:

ՄԱՅՐ ԱԹՈՒՒ

ՎԵՋ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ
ՏՓԻՍԻՑ ԷՋՄԵՆՇԻՆ.

Մարտի 25-ին առաւօտեան ժամը 9¹/₂-ին Հոգեւոր Տէրը բարեհաճեց մեկնել Տփլիս քա-ղաքից դէպի Սանահին. Վեհափառ Հայրա-պետին ուղեկցում էին Տփլիսի թեմի առաջ-նորդ՝ Սրբազան Սուրենեան արքեպիսկոպոսը, Դիւանատան կառավարիչ Արժ. Կորիւն վար-դապետը եւ ուրիշ անձինք: Սանահնայ կա-մրջի մօտ շրջակայ գիւղերից հաւաքուած էր մեծ բաղմութիւն, որ սպասում էր Հայ-րապետի շնորհաբեր գալտեան: Արտակարգ զնայքը հասնելով հնադարեան կամուրջին՝ կանգ առաւ եւ Վեհափառ Հայրապետը ցած իջնելով՝ ընդունեց ժողովրդի մատուցած աղ ու հացը: Կամրջի մուտքի վերայ թարմ ոս-տերից եւ ծաղիկներից մի փառաւոր յաղթա-կան կամար էր պատրաստուած: Ապա Վեհա-փառ Հայրապետը ձի նստելով, շրջապատուած բաղմութիւ ձիււոր ուղեկիցներով՝ Սանահին զնաց, այցելելու պատմական յիշատակներով եւ անցնելով հարուստ վանքը՝ Բահանայական դասը վանքի մօտ զգեստաւորուած՝ «Հրաշա-փառ» շարականով Վեհափառ Հայրապետին դէպի եկեղեցի առաջնորդեց. սահմանուած սաղմոսն ու աղօթքն արտասանելով՝ օրհնեց ժողովրդին եւ զնաց հանգստանալու վանքի սենեակներից մեկում, որ ամէն Զանք դործ էր դրուած Մեծ Հիւրին յարմարեցնելու հա-մար:

Երկու օր հանգստանալուց եւ վանքի բո-լոր հնութիւնները նայելուց յետոյ՝ կիրակի առաւօտեան Նորին Ս. Օծութիւնը Դուր հե-տեորդներով՝ ժամը ութին իջաւ Սա-նահնայ ձորը եւ ապա գնացքով ուղեորուե-ցաւ դէպի Ալեքսանդրապոլ: Երկաթուղու կա-յարանի մօտ հաւաքուած էր ահաբեկ թաղ-մութիւն. գնացքը կանգ առնելիս քաղաքա-զուխը աղ ու հաց մատուցեց Վեհափառ Կա-թողիկոսին, որից յետոյ ծածկած կառքով, բաղմութիւ ձիււորների, կառքերի եւ ուղե-կիցների հետ մտաւ քաղաք: Առջեից տա-նում էին Հայրապետական խաչն ու զաւա-զանը: Վեհափառի կառքը կանգ առաւ ս. Աս-տուածածին եկեղեցու դրան առաջ, ուր Նա կառքից իջնելով՝ մտաւ եկեղեցի, աղօթեց եւ ապա յաջորդարան առաջնորդուեցաւ հան-գըստանալու: Եւ յորդարանում Վեհափառին ներկայացան պաշտօնական անձինք, եւ ժողո-վրդի ներկայացուցիչներ, որոնց թւում նաեւ մահմեդականներ, յոյներ եւ հայ-կաթողիկոսներ: Բոլորին օրհնեց Վեհափառ Հայրապետը եւ յորդորեց առանց աղագլին եւ կրօնական խըտ-րութեան, սիրով եւ համերաշխ ապրել միմեանց հետ, իրեւ հաւասար քաղաքացիներ եւ հինաւուրց զրաւիներ: Ութն օր մնալով Ալեքսան-դրապոլում, Վեհափառը այցելեց Դուր հօտի բոլոր եկեղեցիները եւ հոգեւորիկ քարոզներ խօսեց խուռն բաղմութեան առաջ:

Ապրիլի 5-ին առաւօտեան ժամը 10-ին Նորին Վեհափառութիւնն ուղեորուեցաւ դէպի Մայր Աթոռ: Վեհափառին ծանա-պարհ ձգեցին Ալեքսանդրապոլի յաջորդ Արժ. Մխիթար վարդապետը պ. պ. քաղաքագլու-խը, զաւառապետի օգնականը, բաղմութիւ քահանաներ եւ ժողովրդի ներկայացուցիչներ: Վեհափառը գիշերեց Մաստարա եւ գիւղերում:

Գիւղական հասարակութեան կարողու-թիւնից աւելի շքեղ էր Հայրապետի ընդու-նելութիւնը Արմաւուրում: Վեհափառի անց-նելու փողոցները զարդարուած էին ուռնու ոստերով. Վեհափառի շքախմբի վերայ աւե-լացել էին եւ Մայր Աթոռի միաբանութեան եւ վանական կառավարութեան ներկայացու-ցիչները—Տէր Թովհաննէս եպիսկոպոս Շիրա-կունի եւ Արժ. Ղեռնդ վարդապետ: Վեհին

ընդ առաջ էին եկել ժողովրդի մեծ բազմութիւն և դպրոցի աշակերտներն իրենց ուսուցիչներով: Ս. Հայրապետի հանգստութեան համար շքեղ դարգարուած էր Յովսէփ քահանայի տունը, ուր կրկու ժամ հանգստանալուց և ժողովրդին օրհնելուց յետոյ՝ ձանապարհ ընկաւ դէպի Մայր Աթոռ: Վեհափառի կողքին ուղեկցում էին շրջակայ բոլոր դիւղերի տանուտէրները և բազմաթիւ երիտասարդ ձիաւորներ: Ծորին Վեհափառութեան ընդառաջել էին Սինօղի անդամներէն Բարձր, Եղիսիկ և Աշոտ վարդապետները, Ծեմարանի կողմից պ. տեսուչը իւր օգնական Արժ. Կարապետ վարդապետի հետ:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռս ժամանեց ապր. 8-ին, ժամը 4-ին ճաշից յետոյ: Մայր Աթոռի միաբանութիւնը զգեստաւորուած խաչով, խաչուառով, լապտերներով, Ծեմարանի սաները իրենց ուսուցիչներով սպասում էին մեծ դարբասի մօտ: Վեհափառ Հայրապետը կողքից ցած իջնելով՝ ամպհովանու տակ մտաւ և թափօրը դէպի Մայր տաճարը շարժուեցաւ «Հրաշափառ» շարականով: Հայրապետը աղօթելուց յետոյ՝ վեհափառ մտաւ հանգստանալու:

Հետեւեալ օրը Ս. Եղմիածնի միաբանութիւնը Ծեմարանի ուսուցչական խումբը Մեծ. պ. տեսչի հետ ներկայացան Վեհափառ Հայրապետին Նորա օրհնութիւնն ստանալու:

Ս. Երուսեմիան կիւրակի օրը Աղղիս Վեհափառ Հայրապետը Ս. պատարագ մատոյց Աւագ սեղանի վերայ. պատարագի ժամանակ զեղեցիկ ներդաշնակութեամբ երգում էր Ծեմարանի երգեցիկ խումբը. Նորին Ս. Օծութեան սպասաւորում էին Գեր. Տ. Տ. Մակար, Անանիա և Յովհաննէս Երրակունի եպիսկոպոսները, երեք վարդապետ և չորս սարկաւադ:

Մեռելոց երկուշարթի օրը Վեհափառ Հայրապետը մի ազգու քարոզով մխիթարեց ժողովրդին Ս. Գայիանէի վանքում:

Սինօղի նախանդամ Գեր. Տ. Տ. Սարգիս արքեպիսկոպոսը հիւանդութեան պատճառով Վեհափառ Հայրապետի բարեհաճ

թողաւութեամբ ապաքինուելու համար ուղեորուեցաւ իւր ծննդավայրն՝ Արարան:

Վեհափառ Հայրապետի հրամանով Արժ. Սիօն վարդապետը նշանակուեցաւ յաջորդ հին Նախիջևանի. արժ. հայրը ապրիլի 14-ին ուղեորուեցաւ իւր պաշտօնատեղին:

Մայիսի 4-ին Տաճկաստանից Մայր Աթոռս ժամանեցին Տ. Եղիսիկ, Ծ. վարդապետ Ալվազեան առաջնորդ Ռոդոսթայի և Տ. Եղհաննէս Ծ. վարդապետ Արշարունի առաջնորդ Պրուսայի Հայաստանեայց եկեղեցու պետից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու:

Մայիսի 4-ին Մայր Աթոռս ժամանեց Աղջուայ սուրբ Ստեփաննոս վանքի վանահայր Արժ. Թադէոս վարդապետ Տ. Նիկողայոսեան:

Ապրիլ 29-ին Մայր Աթոռս էր ժամանել Արժ. Տ. Ստեփան Երրակունի վանահայր և պահապան Անիի աւերակաց և մայիս 2-ին վերադարձաւ իւր պաշտօնատեղին:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՑ:

Ապրիլի 8-ից Մայր Աթոռի Դէորգեան հոգևոր Ծեմարանում սկսուած են քննութիւնները և կվերջանան մայիսի 31-ին:

Տեսչի օգնական Արժ. Տ. Կարապետ վարդապետը հոգևոր Պետի բարեհաճ հրամանաւ իւր առարկաներից նշանակուած ժամանակից առաջ քննութիւն կատարելուց յետոյ Բազու ուղեորուեցաւ:

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՑ:

Մայր Աթոռի Մատենադարանի համար շնորհակալութեամբ ստացել ենք հետեւեալ զրքերը.

1. Գ. Նիկողայոս Մատից իւր հեղինակութիւնները՝
ա) Къ критикѣ исторіи Моисея Хоренскаго I. СП. 1898.
բ) Ани, столица древней Арменіи.
գ) Изъ поѣздки на Афонъ.